ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Մարտի 30-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոն Կապանում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 33 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քսանինը, աշխատանքի տեղավորման՝ երկու, հրետակոծված տան փոխհատուցման, տաղավարի համար տարածք հատկացնելու հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քսանյոթին տրվել է դրական լուծում, երկուսը՝ ուսումնասիրության ընթացքում են:

Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին երկու դիմումները, ընթացքի մեջ են հրետակոծված տան փոխհատուցման, տաղավարի համար տարածք հատկացնելու վերաբերյալ դիմումները: